


՝ Յնէ» օ Ի » Է Յն Յ օ Շ

Ճ Է Ի Շ ն ù á í ն Յ Ծ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
Եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³bi áó ì ³Ñ; Ô³½ñ»³Ý

Բարսեղն ու իր ժամանակը

«Ինչպէ՞ս է խօսքը կամենում, որ լինեն քրիստոնեաները: Կամենում է, որ լինեն Քրիստոսի աշակերտները, ապրելով միմիայն ըստ այն իրականութիւնների, որոնք տեսնում են Նրանում կամ լսում են Նրանից»¹:

Այսպէս է գրում Բարսեղը «Բարոյական Կանոններ»ի եզրափակիչ բաժնում, որն իր առաջին գրութիւնն է, մի ընդարձակ հաւաքածոյ աստուածաշնչեան հատուածների, որոնք իմաստութեամբ միմեանց են մօտեցուած եւ կարճաբոս ու բովանդակալի մեկնութիւններով շաղկապուած, որոնց շարունակ վերադառնալու էր իր ամբողջ կեանքի ընթացքում: Բարոյական ութսուներորդ Կանոնի այս խօսքերը կարծես ամփոփում ու դրոշմում են Բարսեղի ամբողջ կեանքը որպէս Տիրոջ աշակերտ, որն իր անխոնջ ու պտղաբեր գործունէութեամբ, որպէս վանական կեանքի հիմնադիր Կապաղովկիայում եւ որպէս բոլոր եկեղեցիների նկատմամբ հոգատարութիւն ունեցող հովիւ, Տիրոջ խօսքին հնազանդուելուց բացի չփնտռեց ուրիշ ոչինչ, մարտնչելով ըստ կանոնների², ընդդէմ այն չարիքների, որոնք չարչարում էին Աստուծոյ Եկեղեցին եւ հետեւանքն էին արիոսական ճգնաժամի. գետնադամբանների հերոսական ժամանակներից յետոյ, այդ չարիքներից ամենամեծը աշխարհական իշխանութեան հետ դաշինքի մէջ մտնելն էր, ուրանալով հաւատքի մաքրութիւնը եւ մարդկային վախով տեղի տալով կայսերական իշխանութեան կողմից բանեցուած ճնշումներին ու սպառնալիքներին:

Աթէնքում, ուր բնակութիւն էր հաստատել ուսումները կատարելագործելու նպատակով, Բարսեղին է հասնում Տիրոջ խօսքը, որն հեռացնելով նրան հեռտորական ասպարէզից, առաջնորդում է դէպի Աննիսոյ, Իրիսի ափերին մօտ, ուր իր էմմէլիա մայրը եւ Մաքրինա քոյրը կեանք էին տուել մի ճգնաւորական հասարակութեան: Այստեղ, մօտաւորապէս 355 թուականին, իր ընկերոջ՝ Գրիգոր Նազիանզացու հետ հիմնում է մի հասարակութիւն, ներշնչուելով էռուտացիոս Սեբաստացու ուսուցումներից, որն արդէն խորապէս տպաւորել էր իր ազգականներին:

էռուտացիոսը, որը Սեբաստիայի եպիսկոպոսն էր, իր ժամանակուայ Եկեղեցուն մեղադրում էր աշխարհականացման ոգուն զիջելու մէջ եւ քարոզում էր վերադարձ հնազանդուելու Աւետարանին: Աւետարանական արմատականութեան իր ծարաւը եւ Տիրոջ հանդէպ իր ամբողջական սէրը շահել էին իր համար բազմաթիւ հետեւորդներ, բայց Բարսեղի յարումը էռուտացիոսական շարժմանը չեղաւ առանց քննական մօտեցման: Հազուադէպ հաւասարակշռութեան տէր անձ լինելով եւ օժտուած լինելով եկեղեցային խոր զգացողութեամբ, եթէ մի կողմից իւրացրեց էռուտացիոսի արմատականութիւնը եւ աւետարանական գաղափարականին միշտ աւելի հաւատարիմ Եկեղեցու փափաքը, Բարսեղը, միւս կողմից, հեռու մնաց զգացականութիւններից եւ Եկեղեցուց հեռանալու փորձութիւնից:

Չեռնադրուելով քահանայ (362թ.), ապա՝ Կեսարիայի եպիսկոպոս (370թ.), քաջութեամբ դատապարտեց քրիստոնեայ հասարակութեան չարիքներն ու դաւաճանութիւնները, որոնցով անհաւատարիմ էին գտնուում Տիրոջ ուսմունքի հանդէպ, եւ աւետարանական հաստատութեամբ դիմադրեց քաղաքական իշխանութիւնների կողմից բանեցուած ճնշումներին ու սպառնալիքներին: Լինելով հայր՝ աղքատների համար, խնամատար ու դատապաշտպան այն բոլոր խեղճերի, որոնք կրում էին հասարակական անարդարութիւններ, իր կողմից հիմնուած վանքերի դռները լայնօրէն բացեց

¹ Regulae morales, 80, 1.

² 2Տմ 2, 5

կարիքաւորներին, հիւանդներին ու որբերի դիմաց: Կեսարիայում կեանք տուեց հասարակական օգնութեան մի շարք կազմակերպութիւններին, որոնք իր յիշատակն յարգելով՝ իր անունով կոչուեցին Բագիլիադէ:

Որքան աւելի էր խորանում Բարսեղի ծանօթութիւնն Աստուածաշնչի հետ, նա այնքան աւելի էր դառնում խոնարհ գրչակիր, Խօսքի հպատակ ծառայ, ուշադիր՝ դառնալու այդ Խօսքի հաւատարիմ արձագանքը, որը միակ կանոնն է, միակ սրբազան օրէնքը, որ պէտք է կաղապարի Տիրոջ աշակերտներից իւրաքանչիւրի միտքն ու գործունէութիւնը: Հետագայ աւանդութիւնը «Կանոններ» տիտղոսը տուեց այն ուսուցումներին, որոնք նա հեղինակել էր իր կողմից հիմնուած վանական հասարակութիւնների համար: Բայց իրականում խօսքը վերաբերւում է այդ հասարակութիւններին տուած այցելութիւնների ժամանակ վանականների կողմից Բարսեղին ուղղուած հարցումների պատասխաններին: Էուստացիոսական ծայրայեղականութեան դէմ բացայայտ քարոզչութեամբ, Բարսեղը շարունակ խուսափում էր վանական այնպիսի բառապաշար գործածելուց, որը կարող էր վանականի միտքը բաժանել եկեղեցային ամբողջութիւնից եւ կարծել տալ՝ թէ գոյութիւն ունեն քրիստոնեաների տարբեր տեսակներ: Բարսեղը բացարձակ եռանդով հաստատեց քրիստոնէական մկրտական կոչման միակութիւնը, ինչպէս նաեւ միակութիւնը սրբութեան, աւետարանական արմատականութեան կոչման, որը պարզապէս հարկաւոր է ապրել կեանքի զանազան վիճակներում, համապատասխանելով Սուրբ Հոգու կողմից շնորհուած պարգեւներին:

Նրկիական Հաւատամքի կորովի պաշտպանը լինելով, մեծապէս փափաքում էր հրաւիրել համամիութենական մի նոր ժողով, որում Արեւելքի եւ Արեւմուտքի եկեղեցիները, մի կողմ թողնելով վիճաբանութիւնները, իշխանութեան ցանկութիւնը, կայսերական իշխանութեան նկատմամբ վախը, կը կարողանային վերագտնել խաղաղութիւնն ու միութիւնը, նորոգ հնազանդութեամբ Տիրոջ Խօսքի հանդէպ: Խաղաղութեան տարածմանն ուղղուած իր գործունէութիւնը պտուղ տուեց 381 թուականին, իր մահից երկու տարի անց, Համամիութենական Երկրորդ Ժողովում, որին նախագահում էր իր ընկերը՝ Գրիգոր Նազիանզացին:

Ի՞նչն է բնորոշ քրիստոնեային: Փոխադարձաբար սիրել միմեանց, ինչպէս նաեւ Քրիստոս սիրեց մեզ¹: Ի՞նչն է բնորոշ քրիստոնեային: Անդադար տեսնել Տիրոջն իր առաջ²: Ի՞նչն է բնորոշ քրիստոնեային: Հսկել ամէն օր եւ ամէն ժամ³, եւ պատրաստ լինել ամենայն կատարելութեամբ գործադրելու այն՝ ինչն հաճելի է Աստծուն, իմանալով՝ որ մեր չկարծած ժամին է գալու Տէրը⁴:

Այս խօսքերով Բարսեղն աւարտում է Բարոյական Կանոնները⁵: Տիրոջ հետ հանդիպումն իր համար տեղի է ունենում 379 թուականի Յունուարի 1ին:

«Հսկիր քո վրայ» քարոզը

Վիճաբանուած է «Հսկիր քո վրայ» քարոզի թուագրումը: Բանասէրներից ոմանք կարծում են, որ այն Բարսեղի երիտասարդութեան գործերից մէկն է, բայց աւելի հաւանական է, որ գրուած լինի նրա կեանքի վերջաւորութեանը, հաւանաբար 377 թուականին:

¹ Հմմտ. Եփս 5, 2

² Հմմտ. Սղմ 15, 8

³ Հմմտ. Մտթ 25, 13

⁴ Հմմտ. Ղկս 12, 40

⁵ Regulae morales, 80, 22.

Հաւատարիմ մնալով այն սկզբունքին, որի համաձայն Աստուածաշունչն ինքն է իր լաւագոյն մեկնաբանը, Բարսեղը Երկրորդումն Օրինաց գրքի 15, 9 հատուածի յորդորն այստեղ բացատրում է Հին եւ Նոր Կտակարանների ուրիշ բազմաթիւ հատուածների միմեանց մերձեցման միջոցով, բացայայտելով այդ սակաւաթիւ խօսքերում պարունակուած «բազում իրողութիւնները» (§ 1), բժշկութեան, կեանքի ու փրկութեան գորութիւնը, որը Տիրոջ խօսքի կողմից շնորհւում է իւրաքանչիւր մարդու, որն ունկնդրում է անկեղծ սրտով: Դէպքերի, մարդկանց եւ իրողութիւնների ուշադիր քննարկումը եւ մարդկային հոգու հետ խորը ծանօթութիւնը նրան մղում են սրբազան գրութիւնը գործնական կեանքից ներս հաւատարմօրէն թարգմանելու: Ինչպէս միշտ, Բարսեղը թողնում է, որ կեանքը հարցումներ ուղղի Խօսքին, իսկ Խօսքը՝ լուսաւորի կեանքը:

Անշուշտ, սեփական անձի վրայ հսկելու այս հրաւէրը, որն Անտոնի Վարքի¹ գրման օրից ի վեր էական կէտն էր դարձել վանական կեանքի, պէտք է որ յատուկ կերպով հոգեհարազատ լինէր նաեւ Բարսեղին, քանի որ նա նոյնպէս վանական էր եւ վանական հասարակութիւնների հիմնադիր:

Երկրորդումն Օրինացի սոյն յորդորը հրաւիրում է հսկելու սեփական սրտի վրայ, որպէսզի նրանից ներս չթափանցեն Աստծոյ Օրէնքին հակառակ մտածումները: Հարկաւոր է հսկել, բացատրում է Բարսեղը, ո՛չ թէ այն բաների վրայ, որոնք խաբէական յաւակնոտութեամբ կարծում ենք՝ թէ մերն են. հարստութիւնները, իշխանութիւնը, մարդկային փառքը, ինքնին կեանքը (§ 3), այլ այն բանի վրայ, որն է միմիայն «մերը», մեր ամենախորին ճշմարտութեան վրայ, որն է սիրտը, որը կարող է բնակատեղին դառնալ չար մտածումների² կամ Խօսքի: Սա, սակայն, չպէտք է հասկանալ Սոկրատի ներհայեցողութեան, ինքնաճանաչման եղանակով, եւ ո՛չ էլ որպէս կոչ՝ փակուելու ինքներս մեզնում, ուրիշներից փախչելով, ինքներս մեր վրայ ամօրէն կքուելով: Սեփական երջանկութեան կամ ապերջանկութեան, խաղաղութեան կամ վշտակրութեան աղբիւրն ինքն իրենից դուրս փնտռելու եւ շարունակական օտարացման վտանգի տակ գտնուելով, Տիրոջ աշակերտը հրաւիրում է վերադառնալու իր անձից ներս, ճանաչելու այս կեանքի բարիքներին կառչելու ունայնութիւնը (§ 5), հրաժարուելու «մտածումների ունայն երեւակայութեամբ» իրականութիւնից խուսափելուց (§ 5), ընդունակ լինելու համար Խօսքի գալստեանը, որն է «Հոգիների ճշմարիտ բժիշկը» (§ 4):

Նրանց՝ ովքեր ցանկանում են աւելի «ուրիշների արարքներով հետաքրքրուել, քան սեփական արարքների շուրջ խորհրդածել» (§ 5), մերձաւորի աչքի միջի շիւղը քննել՝ ուշադրութիւն չդարձնելով իրենց աչքի մէջ մխրճուած գերանին³, այդպիսիներին որպէս օրինակ տրւում է տաճարում աղօթող մաքսաւորը: Ով սովորել է հսկել իր անձի վրայ, ով իջել է իր սեփական սրտի խորութիւններն ի վար, այնքան՝ որ ճանաչել է ինքն իրեն, այնքան՝ որ գիտակից է դարձել իր սեփական մեղքին, այդպիսին չի դատում իր մերձաւորին, այլ Աստծոյ առաջ յանձն է առնում իր սեփական դիւրաբեկութիւնը, իր սեփական յանցանքը, դրանք վստահելով Նրա ողորմութեանը: Յայնժամ իր էական, գոյութեանական չքաւորութիւնը, ողբի ու բողոքի պատճառ դառնալուց հետո (§ 7), բացւում է Աստծոյ պարգեւների գոլարթասիրտ հայեցողութեանը: Յայնժամ սիրտը, չար մտածումներից մաքրուելով, պայծառ ճառագայթում է այն՝ ինչը որ իսկապէս մեծ է մարդկային անձում. Աստծոյ պատկերը, որն Աստուած ինքն է գրոշմել նրանում:

¹ Vita Antonii, 3, 2.

² Հմմտ. Մրկ 7, 21

³ Հմմտ. Մտթ 7, 3

ՀՄԿԻՐ ԷՈՒ ՎՐԵՅ

1. Աստուած, որ ստեղծեց մեզ, պարգևեց մեզ խօսքի գործածութիւնը, որպէսզի միմեանց բացայայտենք մեր սրտերի փափաքները եւ, շնորհիւ միեւնոյն բնութեան, իւրաքանչիւր ոք հաղորդակցութեան մէջ մտնի իր մերձաւորի հետ, կարծես գաղտնի սենեակներից դուրս բերելով սեփական սրտի ծրագրերը: Եթէ լինէինք պարզ հոգիների վիճակում¹, միմեանց հետ անմիջական կերպով հաղորդակցութեան մէջ կը մտնէինք մտածումների միջոցով, բայց քանի որ մեր հոգին մշակում է մտածումները, մարմնի քօղով պարուրուած լինելով՝ կարիքն ունի խօսքերի ու անունների, բացայայտելու համար իր խորութիւններում գտնուող իրողութիւնները: Յայնժամ, երբ մեր միտքը գտնում է իրեն արտայայտելուն ընդունակ հնչիւնները, օդը կտրել անցնելով, խօսքի միջոցով փոխադրուելով ինչպէս մի նաւի վրայ, անցնում է արտասանողից ունկնդրողին: Եթէ խօսքը հանդիպում է խորը անդորրի ու հանդարտութեան, ունկնդրողի ականջների մէջ մտնում է խաղաղ ու վստահելի նաւահանգստի նման: Իսկ եթէ ունկնդրողի կողմից բարձրանում է խռովք, սաստիկ փոթորիկի նման, խօսքը նաւաբեկում է, օդի մէջ չքանալով: Ընծայեցէք, ուրեմն, հանգստութիւն խօսքերիս՝ ձեր լուծեամբ: Նրա բեռների մէջ կը լինի թերեւս օգտակար ինչ որ մի բան²:

Ճշմարտութեան խօսքը կարող է դժուարըմբռնելի լինել, որովհետեւ կարող է աննկատելիորէն անցնել նրանց մօտով՝ ովքեր ուշադիր չեն: Այս իսկ պատճառով, Հոգին կամեցաւ՝ որ այն լինէր սեղմ ու հակիրճ, այնպէս՝ որ սակաւաթիւ խօսքերով բազում իրողութիւններ արտայայտելով հանդերձ, այդուամենայնիւ, իր համառօտութեան շնորհիւ, յիշողութեան համար դիւրին լինէր այն պահելը: Եւ խօսքի բնական զօրութիւնն է խաւարով չքօղարկելը այն՝ ինչ կամենում է արտայայտել, ո՛չ էլ աւելորդ եւ ունայն լինելը՝ քննարկուող նիւթի շուրջ տարածուելիս: Այսպիսիք են այն խօսքերը, որոնք այժմ կարդացինք Մովսէսի գրքերից: Անշուշտ յիշում էք դրանք, դուք՝ որ չէք մերժում ունկնդրութեան ջանքը, անշուշտ եթէ ձեզնից չեն վրիպել դրանք իրենց կարճառօտութեան պատճառով: Այսպէս է ասում. «Հսկիր քո վրայ, որպէսզի Օրէնքին հակառակ մտածումներ չլինեն քո սրտում»³:

Մենք՝ մարդիկս յակուած ենք մեղանչելու մեր մտածումներում: Այս իսկ պատճառով, Նա՝ ով մէկ առ մէկ ստեղծեց մեր սրտերը⁴, իմանալով՝ որ մեղքերի մեծամասնութիւնը գործւում է դիտաւորութեան նպատակաւորութեամբ, որպէս առաջին պատուիրան տուեց սրտի խորքերի մաքրութիւնը⁵: Կամեցաւ, որ առաւել ուշադրութիւն եւ հսկողութիւն գործադրենք մեր այն մասի վրայ, ուր առաւել դիւրութեամբ ենք մեղանչում: Ինչպէս որ առաւել հեռատես բժիշկներն են նուրբ անձանց զգուշացնում յորդորներով, որոնք ունակ են կանխելու չարիքը, այնպէս էլ Նա, որ հոգատար է բոլորի նկատմամբ, հոգիների ճշմարիտ բժիշկը, խստագոյն զգուշութիւն պատուիրեց մեր այն մասերում, որոնք ճանաչում է որպէս առաւել յակուած մեղանչելու:

¹ Ի նկատի ունի անմարմին հոգիներին, առաջին հերթին՝ հրեշտակներին:

² Շարունակում է գործածել նաւի պատկերը:

³ 2Օր 15, 9

⁴ Հմմտ. Սղմ 32, 15

⁵ Սրտի խորութիւն կամ խորք. նախընտրւում է այսպէս թարգմանել յունարէն «to eghemonikon» արտայայտութիւնը: Ստորիկեան գրականութիւնում այս եզրը իմաստաւորում է հոգու ղեկավար սկզբունքը: Բարսեղի գրութիւններում սոյն գաղափարի գործածութեան մէջ նշմարւում է Սղմ 50, 14 հատուածի («Ուղիղ հոգիով հաստատիր ինձ» - «pneumati eghemoniko») եւ Պօղոս Առաքեալի գրութիւնների արձագանքը, որոնցում հռչակւում է Աստուծոյ Հոգու ներկայութիւնն ու ներգործութիւնը մարդու ներաշխարհում (Հմմտ. Հոմ 8, 14 եւ Գղտ 5, 17-18): «Սուրբ Հոգու մասին» գրութիւնում (IX, 22 եւ XIX, 48) Բարսեղն այս արտայայտութիւնը գործածում է որակաւորելու համար Աստուծոյ Հոգին որպէս ներքին մտերիւմ հիւր եւ հոգու առաջնորդ:

Մարմնի գործողութիւնները պահանջում են ժամանակ, յարմար առիթներ, ջանք, նպաստաւոր պարագաներ եւ ուրիշ բազմատեսակ հանգամանքներ, մինչ մտքի մղումները կատարուում են որեւէ պահի, գործում են առանց ջանքի, կազմում են առանց դժուարութեան. որեւէ առիթ նպաստաւոր է մտածումների համար: Կարող է պատահել, որ լուրջ եւ լրջութեան հռչակ վայելող, արտաքուստ իմաստութեան սիւքով պատուած մի անձ, մինչ կանգնած է ուրիշ մարդկանց հետ, որոնք երանի են տալիս իրեն իր առաքինութեան համար, սրտի անտեսանելի շարժմամբ ընթանայ դէպի մեղքը: Երեւակայութեան մէջ տեսաւ իր ցանկութեան առարկան, երեւակայեց ինչ որ մի անվայել խօսակցութիւն եւ, պատկերելով հաճոյքը սրտի ծածուկ աշխատասենեակի աչքերի առաջ, գործեց իր ներսում, առանց վկաների, մի մեղք, որը բոլորից գաղտնի կը մնայ մինչեւ այն օրը, երբ կը գայ Նա՝ ով բացայայտում է խաւարի գաղտնիքները եւ յայտնում է սրտի ցանկութիւնները¹: Ուշադիր եղիր, ուրեմն, որ չլինեն քո սրտում ծածուկ մտածումներ, հակառակ՝ Օրէնքին², քանի որ ով մի կնոջ նայում է նրան ցանկանալով, արդէն իսկ պոռնկանում է իր սրտում³: Հետեւաբար, մարմնի արարքները կարող են խոչընդոտուել բազում արգելքներով, բայց ով մեղանչում է ցանկութեամբ, նոյն մեղքը գործում է մտքի արագութեամբ: Այնտեղ, ուր անմիջական է անկումը, պատրաստ մեզ է տրուել պաշտպանութեան արահետը: Ասում է մեզ. «Հսկիր քո վրայ, որպէսզի Օրէնքին հակառակ գաղտնի մտածումներ չլինեն քո սրտում»⁴: Բայց արդ լաւ է մտնել նիւթի սրտից ներս:

2. «Հսկիր քո վրայ», ասում է: Կենդանի իւրաքանչիւր էակ ինքն իր մէջ ունի սեփական գոյութիւնը պաշտպանելու բնազդը, որը ստացել է իրեն ստեղծող Աստուծոց: Եթէ ուշադրութիւն դարձնես, կը տեսնես, որ կենդանիների մեծամասնութիւնը ինքնաբեր հակազդեցութիւն է ցուցաբերում այն բաների հանդէպ, որոնք վնասակար են իրենց, եւ ընդհակառակն, բնական ձգտումով մղուում է վայելելու այն՝ ինչը որ իրենց օգտակար է: Աստուած, մեր վարժապետը, մեզ տուել է այս մեծ օրինակը, որպէսզի այն՝ ինչ կենդանիների պարագային պատահում է բնականաբար, մեզնում իրականանայ Խօսքի օգնութեամբ, եւ այն՝ ինչ կենդանիներին պատահում է բնազդաբար, մեր կողմից գործադրուի ուշադրութեան եւ մտածումների վրայ անդադար հսկողութեան միջոցով. ինչպէս նաեւ, որպէսզի Աստծոյ պարգեւներն ուշադիր պահպանենք մեզնում, խուսափելով մեղքից, այնպէս՝ ինչպէս կենդանիներն են խուսափում վնասակար կերակուրներից, եւ փնտռելով արդարութիւնը, այնպէս՝ ինչպէս կենդանիները փնտռում են այն խոտերը, որոնցով սնուում են: Հսկիր քո վրայ, ուրեմն, որպէսզի ընդունակ լինես գանազանելու այն՝ ինչը որ վնասակար է քեզ, այն բանից՝ ինչը որ քեզ օգտակար է:

Երկուսն են հսկողութեան կերպերը. մէկը կայանում է տեսանելի իրականութիւնները մարմնի աչքերով դիտելու, միւսը՝ հոգու իմացականութեամբ անտեսանելի իրականութիւնների հայեցողութեանը վարժուելու մէջ: Եթէ ասենք՝ թէ հսկողութեան սոյն պատուիրանը վերաբերում է մեր աչքերի գործունէութեանը, իսկոյն կը խոստովանենք՝ որ անհնարին է նրա գործադրումը: Մի՞թէ հնարաւոր է աչքերով տեսնել ամբողջ անձը: Աչքը չի ծառայում եւ ո՛չ իսկ ինքն իրեն տեսնելու, չի հասնում գլխի գագաթին, չի տեսնում թիկունքը, երեսը, աղիքների ներքին կառուցուածքը: Ամբարշտութիւն կը լինէր հաստատելը՝ թէ Հոգու կողմից տրուած պատուիրաններն անիրագործելի են⁵: Մեզ այլընտրանք չի մնում, այլ միայն հասկանալն այս պատուիրանը

¹ 1Կր 4, 5

² 2Օր 15, 9

³ Հմտ. Մտթ 5, 28

⁴ 2Օր 15, 9

⁵ Մէկ ա՛յլ կանոնում Բարսեղը գրում է. «Նախեւառաջ ասում ենք, որ Աստծոյ կողմից մեզ տրուած բոլոր պատուիրանների պարագային կանխաւ իրենից ստացել ենք նաեւ ուժերը, որոնք հարկաւոր են այդ պատուիրանները գործադրելու համար: Հետեւաբար, չպէտք է մտահոգուենք, կարծես թէ

որպէս վերագրուած հոգու գործունէութեանը¹: Հսկիր քո վրայ, այսինքն՝ քննիր քեզ ամէն կողմից: Արթուն պահիր հոգու աչքը, հսկելու համար անձիդ վրայ: Որոգայթների միջով ես քայլում²: Ճանապարհներիդ երկայնքին ամէնուր որոգայթներ են սփռուած թշնամու կողմից: Քննիր ամէն բան, այծեամի նման ցանցից եւ թռչունի նման թակարդից փրկուել կարողանալու համար³: Այծեամը ցանցի մէջ չի ընկնում իր սուր տեսողութեան շնորհիւ. այստեղից էլ առաջացել է իր անունը⁴: Թռչունը, երբ ուշադիր է, իր թեթեւ թեւերի շնորհիւ կարողանում է որսորդների խորամանկութիւններից է՛լ աւելի վեր բարձրանալ: Տե՛ս, ուրեմն, անձիդ վրայ հսկելու գործում կենդանիներից վատթար չլինես, որպէսզի քեզ չպատահի, որ ցանցի մէջ ընկնելով դառնաս սատանայի որսը եւ ապա որպէս ստրուկ պահուես ըստ իր քմահաճոյքի⁵:

3. Հսկիր ինքդ քո վրայ, ուրեմն. հսկիր, այսինքն, ո՛չ թէ այն բանի վրայ, որ քոնն է, կամ այն բաների վրայ, որոնք շուրջը շուրջը են, այլ միմիայն քո վրայ: Ա՛յլ բան եւք մեք, ա՛յլ բան է այն՝ ինչ մեզ պատկանում է, ա՛յլ բաներ են՝ որ չընկապուում են մեզ: Մենք կենդանի շունչ ենք ու հոգի, որովհետեւ արարուել ենք ըստ պատկերի Նրա՝ ով ստեղծել է մեզ⁶: Այն, որ մերն է, մարմինն է եւ զգացողութիւնները, որոնք մարմինը հայթայթում է մեր համար: Մեր շուրջն են հարստութիւնները, արուեստները եւ այն ամէնը, որ ծառայում է ապրուստին: Ի՞նչ է պահանջում պատուիրանը: Ուշադրութիւն չդարձնել մարմնին, ամէն գնով չփնտռել նրա բարիքը⁷, առողջութիւնը, գեղեցկութիւնը, հաճոյքների վայելքը, երկարակեցութիւնը. չմեծարել հարստութիւնը, փառքն ու իշխանութիւնը. մեծագոյն իրողութիւն չհամարել այս կեանքի կարիքների գոհացումը, այն աստիճան՝ որ անհոգութեան մատնուեն մտահոգութիւններն այն կեանքի, որն ըստ կարեւորութեան առաջինն է, այլ՝ հսկիր քո վրայ, այսինքն՝ հսկիր հոգուդ վրայ: Զարգարիբ այն եւ նրա հանդէպ հոգատարութիւն ունեցիր, այնպէս՝ որ պատրաստակամօրէն հեռացնես գլուխ բարձրացնող չարամտութեան որեւէ հետք եւ բիծ, մաքրես հոգիդ ամօթալի որեւէ յանցանքից, այն պճնելու եւ պայծառափայլ դարձնելու համար առաքինութեան գեղեցկութիւններով:

Քննիր ինքդ քեզ, իմանալու համար՝ թէ ո՞վ ես: Ճանաչի՛ր բնութիւնդ: Մահկանացու է մարմինդ, անմահ է հոգիդ: Կրկնակի է մեր կեանքը. մարմնինը, որն իսկոյն անցնում է, հոգուն բնորոշ կեանքը, որը վախճան չունի: Հսկիր քո վրայ, ընթացքդ մի՛ արգելակիր մահկանացու իրողութիւնների առաջ, կարծես դրանք

մեզնից պահանջում է չլսուած մի բան, եւ ո՛չ էլ պէտք է հպարտանանք, կարծես մեր ներդրումներն աւելի են՝ քան մեզ տրուածը: Եթէ այս տրուած ուժերի շնորհիւ վարում ենք ուղղութեամբ եւ ինչպէս որ պատշաճ է, ապրում ենք սուրբ եւ առաքինի կեանքով. մինչ եթէ մեզնում խոչընդոտում ենք այդ ուժերի ներգործութիւնը, քարշ ենք գալիս չարիքների մէջ: Եւ սա՛ է, ահա, չարիքի սահմանումը. չար եւ Տիրոջ պատուիրանին հակառակ գործածումն այն բաների, որոնք Աստուած մեզ տուել է բարու հեռանկարով: Իսկ Աստուծոյ կողմից պահանջուած առաքինութեան սահմանումը հետեւեալն է. այդ պարգեւների գործածումը բարի խղճմտանքով, Տիրոջ պատուիրանի համաձայն»:

¹ Այստեղ նախընտրուած է «հոգի» թարգմանել – ո՛չ առանց երկմտանքի – յունարէն «nous» եզրը, որն այլուր թարգմանուած է միտք կամ իմացականութիւն: Հայրախօսական աւանդութիւնում «nous»-ը մատնանշում է սրտի ամենախորին վայրը, ուր դրոշմուած է Աստուծոյ պատկերը:

² Միր 9, 13

³ Առկ 6, 5

⁴ «Այծեամ» յունարէնում ասում է «dorkas», որն առաջացել է «derkomai» բայի միեւնոյն արմատից, որ նշանակում է «տեսնել»:

⁵ Հմմտ. 2Տմ 2, 26

⁶ Հմմտ. Ծնդ 1, 27

⁷ Սուրբ Հայրապետը չի ուսուցանում արհամարհել մարմինը, որն Աստուծոյ ստեղծագործութիւնն է, այլ, ինչպէս բացատրում է մի քանի տող յետոյ, չգերադասել մարմինը հոգուն, յաւիտենական կեանքին, որն ըստ կարեւորութեան առաջինն է: Արդէն այդ մտքով է ասում «չփնտռել ամէն գնով»:

յաւիտենական լինէին, եւ մի՛ արհամարհիր յաւիտենականները, կարծես անցողիկ լինէին դրանք: Արհամարհիր մարմինը, քանի որ անցնում է, հոգատար եղիր հոգուդ նկատմամբ, որպէս անմահ իրականութիւն: Պրպտիր անձդ ամենայն ուշադրութեամբ, մէկին եւ միւսին տալու համար այն՝ ինչ իւրաքանչիւրին հասնում է. մարմինն՝ սնունդ եւ հագուստ¹, հոգուն՝ քրիստոնէական կեանքի ուսուցումները², խոհեմ վարմունք, առաքինութիւնների գործադրումը, կրքերի ուղիղ կողմնորոշումը: Մարմինը թող չճարպակալի եւ չափազանց խնամքներով թող չպատուի, որովհետեւ մարմինը Հոգուն հակառակ ցանկութիւններ ունի, իսկ Հոգին մարմին հակառակ փափաքներ ունի. այս երկուսը փոխադարձաբար պատերազմում են միմեանց դէմ³: Ուշադիր եղիր, որովհետեւ մարմինը չափազանց խնամելով՝ չափազանց իշխանութիւն եւ տալիս անձիդ ամենահեղգ մասին: Եթէ ծանրացնում ես կշեռքի նժարներից մէկը, անխուսափելիօրէն թեթեւացնում ես միւսը: Այս նոյն բանն է պատահում մարմնի եւ հոգու խնամքի պարագային. մէկի աճը պատճառն է միւսի նուազման: Երբ մարմինը փարթամ է եւ ճարպով պարարտացած, հոգին անխուսափելիօրէն դառնում է նիհար ու անուժ իրեն բնորոշ գործունէութիւնների համար: Երբ հոգին վայելում է կատարեալ առողջութիւն եւ բարութեան շուրջ խորհրդածոնով բարձրանում է այն մեծութեանը, որն իր բնութենականն է, որպէս հետեւանք նուազում է մարմնի փարթամութիւնը⁴:

4. Այս պատուիրանն օգտակար է տկարների եւ չկարծածից աւելի նպաստաւոր է զօրեղների համար: Բժիշկներն հիւանդներին պատուիրում են հսկել սեփական անձանց վրայ եւ զանց չառնել ոչ մի բան, որ կարող է նպաստել խնամքին: Նմանապէս նաեւ խօսքը, բժիշկը մեր հոգիների, այս փոքրիկ օգնութեամբ բժշկում է մեղքերով հիւանդացած հոգին: Հսկիր, ուրեմն, քո վրայ, որպէսզի այս փրկարար խնամքներից ստանալ կարողանաս մոլորումիդ համապատասխան դարմանը:

Մեծ եւ ծա՞նր է մեղքը: Կարիքն ունես լուրջ խոստովանանքի, դառն արցունքների, քնի զոհողութեան, անդադար պահքի: Եթէ անկումը թեթեւ է, նուազ ծանր, թող նրան համապատասխան լինի նաեւ ապաշխարութիւնը: Միայն թէ հսկիր քո վրայ, իմանալու համար՝ թէ հոգիդ քաջառողջ է կամ հիւանդ: Շատերն իրենց ծուլութեան պատճառով վարաքուցում են ծանր ու անբուժելի հիւանդութիւններով, բայց ո՛չ էլ գիտակից են իրենց հիւանդագին վիճակին: Մեծ է օգտակարութիւնն այս պատուիրանի նաեւ զօրեղների համար, որպէս առաջնորդ նրանց վարքի, քանի որ բժշկում է հիւանդներին եւ դէպի կատարելութիւն է առաջնորդում առողջներին:

Մեզնից՝ խօսքի աշակերտներիցս իւրաքանչիւրը զբաղւում է Աւետարանի կողմից պատուիրուած գործերից մէկով: Այս մեծ տան մէջ, որն է Եկեղեցին, ո՛չ միայն կան ամէն տեսակի անօթներ՝ ոսկեայ, արծաթեայ, փայտէ կամ կաւէ⁵, այլ կան նաեւ բազմատեսակ արուեստներ: Աստծոյ տան մէջ, յիրաւի, որ է կենդանի Աստծոյ Եկեղեցին¹, կան որսորդներ, ճանապարհորդներ, ճարտարապետներ, պատշարներ, հողագործներ, հովիւներ,

¹ Հմմտ. 1Տմ 6, 8

² Յունարէն «dogmata eusebeias»: «Eusebeia»ն իմաստաւորում է Աւետարանին համաձայն ուսմունքն ու կենսաձեւը, հակառակ «asebeia»ին, ամբարշտութեանը նրանց՝ ովքեր մերժում են ողջամիտ ուսմունքը:

³ Գղտ 5, 17

⁴ Այս հարցում միատեսակ չէ բոլոր ժամանակների եւ բոլոր վայրերի Հայրապետների մօտեցումը: Երկու ուղղութիւններն էլ, սակայն, ընդունելի են, որովհետեւ վերաբերւում են ըստ էութեան երկրորդական հարցի, այսինքն՝ խօսքը չի վերաբերւում հաւատքի ճշմարտութիւններից որեւէ մէկին: Միւս ուղղութեան ներկայացուցիչներից մէկն է, օրինակի համար, Սուրբ Սերովբէ Սարովցի ռուս վանականը, որ գրում է. «Երիտասարդութեան օրերից ի վեր սովորութիւն եմ դարձրել ճաշից յետոյ կարճատեւ հանգիստ շնորհել մարմնիս, որովհետեւ երբ մարմինս հանգիստ է, առաւել դիւրութեամբ է հնազանդւում հոգուն կամքին»: Կարեւորն առաքինութիւնների, մի խօսքով՝ աստուածասիրութեան եւ մարդասիրութեան գործադրումն է, յիշատակը յաւիտենական կեանքի:

⁵ Հմմտ. 2Տմ 2, 20

մարմնամարզիկներ, զինուորներ: Մեր կողմից քննարկուող այս փոքրիկ պատուիրանը վաւերական է սրանցից իւրաքանչիւրի համար, իւրաքանչիւրին ներշնչելով ճշգրտութիւն աշխատանքի մէջ եւ հոգատարութիւն սեփական պարտականութիւններում: Դու, որսորդ, առաքուած ես Տիրոջ կողմից, որն ասում է. «Ահա ուղարկում եմ բազում որսորդներ, որոնք որսալու են նրանց բոլոր սարերի գագաթներից»²: Հսկիր ջանասիրութեամբ, ուրեմն, եթէ չես ուզում, որ որսը խոյս տայ քեզնից. ճշմարտութեան խօսքով ձգելով նրանց՝ ուղքեր չարիքի պատճառով վայրի էին դարձել, առաջնորդիր դէպի Նա՝ ով փրկում է: Դու, ճանապարհորդ, նմանում ես նրան՝ ով աղօթում էր. «Ուղղիր ընթացքս»³: Հսկիր քո վրայ, որպէսզի չկորցնես ճանապարհը, որպէսզի չչեղուես աջ կամ ձախ⁴. Քայլիր թագաւորական արահետներով⁵: Ճարտարապետը կառուցում է հաւատքի ամրակուռ հիմքի վրայ, որն է Քրիստոս Յիսուս⁶: Ով կառուցում է, թող ուշադիր լինի՝ թէ ինչով է կառուցում. փայտով, ծղոտով, յարդով, կամ էլ՝ ոսկիով, արծաթով, թանկարժէք քարերով⁷: Հովիւը թող հսկի՝ զանց չառնելու համար իր պարտականութիւններից որեւէ մէկը: Որո՞նք են այդ պարտականութիւնները: Վերագտնել մոլորուած ոչխարին, բժշկել վէրքերը, խնամել հիւանդութիւնները⁸: Իսկ դու, հողագործ, փորիր ամուլ թղենու չորսբոլորը եւ պարարտացրու հողը, որպէսզի տուածդ օգնութեան շնորհիւ կարող լինի պտղաբերելու: Իսկ դու, զինուոր, յանձն առ տառապանքներն Աւետարանի պատճառով⁹, մղիր բարի պատերազմն¹¹ ընդդէմ չարութեան ոգիների¹² եւ մարմնի կրքերի, Հոգու սպառազինութեամբ զգեստաւորուիր¹³: Աշխարհական անցուդարձերին մի՛ խառնուիր, որպէսզի հաճոյ լինես քեզ զինուորագրողին¹⁴: Մարզիկ, հսկիր քո վրայ, որպէսզի չխախտես մարզուելու կանոններից ոչ մէկը: Ոչ ոք դափնեպսակ չի ստանում, եթէ չի մարտնչում ըստ կանոնների¹⁵: Պօղոսին նմանուիր վազքում, մենամարտում, ըմբշամարտում¹⁶, եւ որպէս հմուտ մարզիկ՝ հոգուդ հայեացքը գերծ պահիր ցրումներից¹⁷: Բազուկներդ տարածելով, պաշտպանիր կենսական անդամներդ. աչքդ թող նշանառութեան ներքոյ պահի թշնամուն: Վազքի ժամանակ նայիր Նրան՝ ով առջեւումդ է¹⁸. վազիր, որպէսզի հասնես¹⁹: Մենամարտի մէջ պայքարիր ընդդէմ աներեւոյթ

¹ 1Տմ 3, 15

² Եր 16, 16

³ Սղմ 118, 133

⁴ Հմմտ. 2Օր 17, 20

⁵ Հմմտ. Թց 20, 17

⁶ 1Կր 3, 11

⁷ Հմմտ. 1Կր 3, 10-12

⁸ Հմմտ. Եզկ 34, 16

⁹ Հմմտ. Ղկս 13, 8

¹⁰ 2Տմ 1, 8; Հմմտ. 2, 3

¹¹ 1Տմ 1, 18

¹² Հմմտ. Եփս 6, 12

¹³ Հմմտ. Եփս 6, 13

¹⁴ 2Տմ 2, 4

¹⁵ 2Տմ 2, 5

¹⁶ Հմմտ. 1Կր 9, 26

¹⁷ Յունարէն՝ «ameteoriston». սա բարսեղեան նորաբանութիւն է, որ ներշնչուած է Ղկս 12, 29 հատուածից. «Մի՛ մտահոգուէք, թէ ինչ էք ուտելու կամ ինչ էք խմելու, եւ մի՛ մտատանջուէք» (me meteorizesthe), մատնանշելու համար ոչ-մտատանջութեան, ոչ-վրդովուածութեան դիրքորոշումը Աստուծոյ Արքայութեան փնտռողի գործում (Հմմտ. Ղկս 12, 31):

¹⁸ Հմմտ. Փլպ 3, 13

¹⁹ Հմմտ. 1Կր 9, 24

հակառակորդներ¹: Խօսքը կամենում է, որ դու այսպես վարուես քո ամբողջ կեանքի ընթացքում, առանց սայթաքելու, առանց ննջելու, այլ անձիդ վրայ ժուժկալուծեամբ ու արթնութեամբ հսկելով²:

5. Ամբողջ օրը բաւական չէր լինի³, եթէ մտադիր լինէի մէկիկ մէկիկ թուարկելու զբաղումները բոլոր նրանց՝ ովքեր համագործակցում են Քրիստոսի Աւետարանին, եւ պատուիրանի ուժը, որն համակերպում է բոլորին: Հսկիր քո վրայ, արթուն եղիր, խորհրդածող, ներկայի պահպան, ապագայի կանխազգաց: Խուսափիր ծուլութեանդ պատճառով կորցնելուց այն՝ ինչն արդէն ունես, եւ մի՛ երեւակայիր վայելել այն՝ ինչ չունես, կարծես թէ ձեռքերիդ մէջ է այն՝ ինչը որ թերեւս երբեք էլ չունենաս: Մի՞թէ երիտասարդներին բնորոշ հիւանդութիւնը չէ հոգու թեթեւամտութեամբ արդէն իսկ իրենց տիրապետութեան տակ կարծելն այն՝ ինչը որ միայն յուսացուած իրականութիւն է: Անդորրի պահերին, գիշերուայ խաղաղութեան մէջ, ստեղծում են անհիմն ցնորքներ եւ, ցանկասէր մտքով ամէն կողմ թափառելով, երեւակայում են շքեղափայլ մի կեանք, վայելչագեղ ամուսնութիւն, խելացի զաւակներ, ալեւոր ծերութիւն, բոլորի յարգանքը: Ապա, այս յոյսերով գոհանալ չկարողանալով, բարձրանում են մինչեւ մարդկային ամենավերին իրողութիւնները: Իրենց երեւակայութեան մէջ ձեռք են բերում մեծ ու հրաշալի տներ, դրանք լցնում են ամէն տեսակի թանկարժէք կահոյքներով, շրջապատում են դրանք այնքան հողերով, որքան որ կարողանում է իրենում բովանդակել իրենց երեւակայութիւնը, եւ իրենց ունայնութեան դրամապանակներում հաւաքում են այդ հողերից ստացուած եկամուտները: Այս ամէնին աւելացնում են հօտեր, ծառաների մի զարմանալի բազմութիւն, քաղաքական վարչակարգեր, ժողովուրդների ղեկավարում, գօրքերի հրամանատարութիւն, պատերազմներ, յաղթանակներ, թագաւորութիւններ: Այս բոլոր բաները պատկերելով իրենց ունայն երեւակայութեան մտածումներում, խենթութեան գերառատութեան մէջ կարծում են՝ թէ յուսացուած իրականութիւնները վայելում են այնպէս՝ կարծես արդէն իսկ իրենց տիրապետութեան տակ են, իրենց ոտքերի առաջ պատրաստ: Մարմնի արթուն վիճակում երազելու այս կերպը բնորոշ հիւանդութիւնն է ծոյլ ու անընդունակ հոգու: Կասեցնելու համար մտքի այս դատարկութիւնը եւ մտածումների պղպղումը, ինչպէս նաեւ սանձահարելու համար նրանց թափառումները, Խօսքը տալիս է այս մեծ եւ իմաստուն պատուիրանը. «Քո վրայ», ասում է, «պէտք է հսկես»: Երեւակայելու փոխարէն այն՝ ինչ գոյութիւն չունի, ջանա օգտուել այն բաներից՝ որոնք գոյութիւն ունեն:

Կարծում եմ, որ Նա՛ ով տուել է Օրէնքը, այս պատուիրանն աւանդել է արմատախիլ անելու համար կրքերից նաեւ մէկ ուրիշը: Քանի որ մեզնից իւրաքանչիւրն առաւել հեշտութեամբ յակուած է ուրիշներին վերաբերուող բաներով հետաքրքրուելու՝ քան իրենների շուրջ խորհրդածելու⁴, որպէսզի այս հիւանդութեամբ չվարաքուենք, ասում է. «Մի կողմ թող սրա կամ նրա չարութեամբ հետաքրքրուելը, ուրիշների տկարութիւնը գննելու համար ժամանակ մի՛ յատկացրու մտածումներիդ, այլ հսկիր քո վրայ, այսինքն՝ հոգուդ աչքն ուղղիր գննելու սեփական անձը»: Շա՛տ շատերն, իրօք, Տիրոջ խօսքի համաձայն, տեսնում են եղբօր աչքի միջի շիւղը եւ չեն տեսնում գերանը, որն իրենց աչքի մէջ է⁵:

Հետեւաբար, անդադար քննիր քեզ, եթէ կամենում ես պատուիրանի համաձայն ապրել: Կանգ մի՛ առ դիտելու քեզնից դուրս, փնտռելով գտնել ինչ որ մի բան, որով

¹ Հմմտ. Եփս 6, 12

² Հմմտ. 1Թղ 5, 6; 1Պտ 5, 8

³ Հմմտ. Եբր 11, 32

⁴ Վեցամատեանի մասին վեցերորդ քարոզում Բարսեղն հաստատում է. «Իրականում, սեփական անձի ճանաչումը կարծես թէ բոլորի մէջ ամենադժուարին գործն է: Ո՛չ միայն աչքը, որ տեսնում է իրենից դուրս գտնուող առարկաները, չի կարողանում տեսնել ինքն իրեն, այլ մեր հոգին նոյնպէս, ուրիշների մեղքը տեսնելով հանդերձ դանդաղում է ընդունելու իր թերացումները»:

⁵ Հմմտ. Մտթ 7, 3

կարող կը լինես յանդիմանելու ուրիշներին, ինչպէս վարուում էր այն յաւակնոտ եւ ունայնափառ փարիսեցիին, որն ինքն իրեն արդարացնելով բարձրացնում էր սեփական անձը եւ արհամարհում էր մաքսաւորին¹: Մի՛ դադարեցրու անձիդ զննումը, հարցնելով ինքդ քեզ՝ թէ արդեօք մեղանչեցի՞ր մտածումներովդ, կամ արդեօք լեզուդ, որն մտքից աւելի արագ է, ինչ որ մի բան չասա՞ց չափազանց, կամ թէ ձեռքերիդ գործերով նպատակներիցդ աւելի բան չկատարեցի՞ր: Եւ եթէ կեանքումդ մեծ թուով մեղքեր կը գտնես – մարդ ես, ուստի բաւական թուով անկասկած կը գտնես – կրկնիր մաքսաւորի խօսքերը. «Աստուած, ողորմիր ինձ՝ մեղաւորիս»²:

Հսկիր քո վրայ: Եթէ վայելում ես մեծ խաղաղութիւն, եթէ օրերդ ընթանում են երջանկութեան մէջ, այս խօսքերն օգտակար կը լինեն քեզ որպէս հմուտ խորհրդատու, յիշեցնելու համար մարդկային իրողութիւնների իրավիճակը: Իսկ եթէ ճնշուած ես նեղութիւններով, սրտիդ խորքում երգուած այս խօսքերն օգտակար կը լինեն քեզ, հպարտութեամբ չափազանց անմտութեան չբարձրանալու եւ յուսահատութեամբ թշուառ վհատութեան մէջ չընկնելու համար: Հպարտ ես հարստութիւններովդ: Գոռոզանո՞ւմ ես նախնիներիդ անունով: Հպարտանո՞ւմ ես հայրենիքովդ, մարմնիդ գեղեցկութեամբ, համընդհանուր պատուով, որն վայելում ես: Հսկիր քո վրայ: Մահկանացու մարդ ես, հող ես եւ հողին պիտի վերադառնաս³: Մտածիր այն անձանց մասին, որոնք նոյն պատիւները վայելեցին քեզնից առաջ: Ո՞ւր են քաղաքական իշխանութիւն ունեցողները: Իսկ անյաղթ հռետորները: Ո՞ւր են թատրոններ կազմակերպողները, հռչակաւոր ձեռնարկները, հրամանատարները, վարչապետները, հզօրները: Մի՞թէ ամէն բան փոշի չէ: Մի՞թէ ամէն բան հէքեաթ չէ: Մի՞թէ նրանց կեանքի յիշատակը չի վերածուել ոսկորների կոյտի: Գնա՛, զննիր գերեզմանների ներսը եւ եթէ կարող ես՝ ջանա զանազանել ծառան տիրոջից, աղքատը հարուստից: Զանազանիր, եթէ կարող ես, բանտարկեալը թագաւորից, հզօրը տկարից, գեղեցիկը տգեղից: Յիշիր բնութեանդ ինչպիսին լինելը եւ հպարտութիւնը վրադ երբեք չի տիրապետի: Կը յիշես՝ թէ ով ես, եթէ հսկես քո վրայ:

6. Խոնարհ ու անծանօթ ընտանիքի՞ց ես սերում, աղքատների մէջ ամենաաղքատն ես, անտուն, հայրենագուրդ, հիւանդ, նուազագոյն անհրաժեշտից զուրկ, հզօրների առաջ դողացող, բոլորից սարսափող՝ կեանքիդ աղքատութեան պատճառով: Գրուած է. «Աղքատը սպառնալիքներ չի լսում»⁴: Անձդ մի՛ լքիր, ուրեմն, յուսահատութեան գրկում, որովհետեւ չունես այս կեանքում նախանձի առարկայ հանդիսացող ոչինչ, մի՛ զրկիր հոգիդ բարի յոյսից⁵, այլ խրախուսիր հոգիդ խորհրդածելու այն բարիքների մասին, որոնք որոնք Աստուած արդէն պարգեւել է քեզ անցեալում եւ միւսների, որոնք խոստման համաձայն վերապահել է գալիք ժամանակների համար⁶:

Իսկ ամէն ինչից աւելի յիշիր, որ մարդ ես, կենդանի արարածների մէջ միակը, որին Աստուած ինքն է ստեղծել⁷: Իմաստուն մարդու համար մի՞թէ բաւական չէ ամէն ինչի Արարիչ Աստծոյ ձեռքերում կաղապարուած լինելու պարագան, որպէսզի ունենայ բերկրանքն ի վերուստ: Արարչի պատկերով ստեղծուած լինելդ, ապա, քեզ հնարաւորութիւն է տալիս բարութեամբ ապրուած կեանքի շնորհիւ բարձրանալու մինչեւ

¹ Հմմտ. Ղկս 18, 10-14

² Ղկս 18, 13

³ Հմմտ. Ծնդ 3, 19

⁴ Առկ 13, 8

⁵ Հմմտ. 2Թդ 2, 16

⁶ Հմմտ. Կղս 1, 5

⁷ Հմմտ. Ծնդ 2, 7: Բարսեղը, ինչպէս նաեւ հայրախօսական ամբողջ աւանդութիւնը, տարբերութիւն է դնում հրամանով ստեղծելու եւ անմիջականօրէն սեփական ձեռքերով ստեղծելու միջեւ: Առաջինը պարագան է ամբողջ արարչութեան, բացառութեամբ մարդու (Աստուած ասաց, հրամայեց, եւ եղաւ), մինչ երկրորդը վերաբերուած է միմիայն մարդու արարմանը (Աստուած ստեղծեց մարդուն):

հրեշտակային փառքերը: Ստացել ես բանական հոգի, որի միջոցով ըմբռնում ես Աստծուն, մտքով հայտնում ես գոյութիւնների էութիւնը, քաղում ես իմաստութեան քաղցրիկ պտուղը: Երկրային բոլոր կենդանիները, թէ՛ ընտանիները եւ թէ՛ վայրիները, բոլոր նրանք՝ որ ապրում են ջրերում եւ բոլոր նրանք՝ որ սաւառնում են օդում, քեզ են ծառայում, ենթակայ են քեզ: Մի՞թէ դու չես, որ յօրինել ես արուեստները, որ կառուցել ես քաղաքներ եւ ստեղծել ես այն ամէնն՝ ինչ ծառայում է կարիքներիդ ու վայելքիդ: Բանականութեանդ շնորհիւ մի՞թէ չես սովորել ակոսել ծովերը: Երկիրն ու ծովը մի՞թէ կեանքիդ ծառաները չեն: Օդը, երկինքը, աստղերի խմբերը մի՞թէ չեն յայտնում իրենց կարգն ու կանոնը: Ինչո՞ւ ես ուրեմն տրտմում, եթէ արծաթեայ երասանակներով նժոյգներ չունես: Ունես արեւը, որն իր արագ վազքով լուսաւորում է քեզ ամբողջ օրուայ ընթացքում: Չունես արծաթեայ կամ ոսկեայ ջահեր, բայց ունես լուսինը, որը գլխավերեւումդ փայլում է անսահման լոյսով: Չես ճամփորդում ոսկեգօծ կառքերով, բայց որպէս փոխադրամիջոց ունես ոտքերդ, որոնք բնականաբար քոնն են: Ինչո՞ւ ես երանելի համարում նրանց, որոնց գրպանները լիքն են, բայց ուրիշների ոտքերի կարիքն ունեն չարժուելու համար: Փղոսկրեայ անկողնու վրայ չես հանգստանում¹, բայց ունես հողը, որն աշխարհիս ամբողջ փղոսկրից աւելի թանկ է եւ պարգեւում է քեզ քաղցր հանգիստ, արագ եւ մտատանջումներից զերծ քուն: Ոսկեգօծ առաստաղի ներքոյ չես հանգստանում, բայց ունես երկինքը, որը կայծկւտում է աստղերի անասելի գեղեցկութեամբ:

Սրանք մարդկային բարիքներ են, բայց կայ դե՛ռ աւելի մեծ մի բան: Քո համար Աստուած եկաւ մարդկանց մէջ, քո համար Հոգին բաշխեց Իր պարգեւները, քո համար մահը վերացուեց, քո համար է յարութեան յոյսը, քո համար են աստուածային պատուիրանները, որոնք կեանքդ դարձնում են կատարեալ եւ քեզ առաջնորդում են դէպի Աստուած տանող շաւիղներում, քո համար է նախապատրաստուած Երկնքի Արքայութիւնը, քո համար են պատրաստուած արդարութեան դափնեպսակները², եթէ առաքինութեան պահանջած ջանքի առաջ ետ չես ընկրկում:

7. Եթէ հսկես քո վրայ, շուրջբոլորդ կը գտնես այս բարիքները, ինչպէս նաեւ ուրիշներ՝ դե՛ռ աւելի մեծ: Գոհ կը լինես ունեցածովդ եւ չունեցածիդ պատճառով չես տրտմի: Եթէ ամէնուր մտքիդ աչքերի առաջ պահես այս պատուիրանը, նրանից մեծ օգնութիւն կը ստանաս: Զայրոյթը տիրե՞լ է մտքերիդ եւ բարկութիւնն անվայել խօսքերի՞ է քեզ հասցրել, բռնի ու անմիտ շարժումների՞: Եթէ հսկում ես քո վրայ, կը զսպես զայրոյթդ, ինչպէս վարում են անհնազանդ ու ըմբոստ նժոյգի հետ, սանձերի նման գործածելով Աստծոյ խօսքը: Տէրը կը լինես նաեւ լեզուիդ, ձեռքերդ չես բարձրացնի քեզ վիրաւորած անձի դէմ: Իսկ երբ չար ցանկութիւնները զրգռում են հոգիդ եւ այն մղում են բաւարարելու անզուսպ ու անկարգ ազդակները, եթէ հսկում ես քո վրայ եւ յիշում, որ ներկայ հաճոյքն ունենալու է դառն վախճան եւ մեր մարմնի ներսում հաճոյքի կողմից առաջացրած զրգռուածութիւնը ծնելու է այն թունաւոր որդը, որն առանց վախճանի պատժելու է մեզ գեհեհում³, եւ որ մարմնի տենչանքից ծնուելու է յաւիտենական կրակը⁴, հաճոյքները, փախուստի մատնուելով, իսկոյն կը չքանան եւ քեզնում ծնուելը կը զգաս մի հրաշալի անդորրի ու խաղաղութեան, ինչպէս անկարգապահ աղախիներն ժխորը լռեցւում է իմաստուն տանտիկնոջ ներկայութեամբ:

Հսկիր քո վրայ, ուրեմն, եւ իմացիր, որ հոգիդ բաղկացած է երկու զօրութիւններից. մէկը բանական ու խելացի, իսկ միւսը՝ կրքերին ենթակայ ու անմիտ: Առաջինին է ըստ բնութեան պատկանում հրամայելու պաշտօնը, երկրորդին՝ հնազանդուելն ու բանականութեանը ենթակայ մնալը: Երբեք մի՛ թոյլատրիր, որ հոգիդ ենթարկուի եւ

¹ Հմմտ. Ամս 6, 4

² Հմմտ. 2Տմ 4, 8

³ Հմմտ. Ես 66, 24; Մրկ 9, 43

⁴ Հմմտ. Մտթ 25, 41

ցածրանալով ստրկանայ կրքերին. երբեք մի՛ թոյլատրիր, որ կրքերը բանականութեան դէմ ծառանան եւ գրաւեն հոգու վրայ ունեցած նրա իշխանութիւնը:

Ի վերջոյ, սեփական անձիդ ուշադիր քննումը բաւական կը լինի՝ քեզ ձեռքիցդ բռնած առաջնորդելու դէպի Աստծոյ ճանաչողութիւնը: Եթէ հսկես քո վրայ, կարիքը չես ունենայ Արարչի հետքերը փնտռելու տիեզերքի ամբողջականութեան մէջ, այլ ինքդ քեզնում, կարծես մի փոքրիկ աշխարհում, կը ճանաչես մեծամեծ իմաստութիւնը՝ Նրա՝ ով ստեղծել է քեզ: Քեզնում ներկայ անմարմին հոգուց կարող ես եզրակացնել գաղափարն անմարմին Աստծոյ, որ պարագրուած չէ որեւէ վայրում: Մի ժամանակ, իրօք, քո հոգին նոյնպէս չէր մնում մի ճշգրիտ վայրում, այլ այժմ գտնուում է այնտեղ՝ մարմնի հետ միութեան պատճառով: Հաւատա, որ Աստուած անտեսանելի է¹, մտածելով՝ որ քո հոգին նոյնպէս տեսանելի չէ մարմնի աչքերով. չունի գոյն, ձեւ, ո՛չ էլ Ֆիզիկական ուրիշ որեւէ յատկութիւն, այլ միմիայն իր գործունէութեամբ է ճանաչուում: Հետեւաբար, Աստծոյ ճանաչողութիւնը նոյնպէս մի՛ փնտռիր աչքերով, այլ մտածումներիդ պարզելիք հաւատքդ եւ Նրա վերաբերեալ հոգեւոր ծանօթութիւն ունեցիր: Հիացիր, թէ արուեստագէտն ինչպէ՛ս կարողացաւ մարմնիդ միաւորել հոգին, մի այնպիսի ուժով, որն հասնում է մինչեւ բոլոր ծայրամասերը. ինչպէ՛ս կարողացաւ ամենատարբեր անդամները կատարեալ ներդաշնակութեամբ ու համերաշխութեամբ միաւորել: Մտածիր, թէ մարմինն ինչպիսի՛ ուժ է ստանում հոգուց. ինչպիսի՛ զգայունակութիւն է մարմնին հաղորդում հոգին. ինչպէ՛ս է մարմինը կեանք ստանում հոգուց, մինչ հոգին մարմնից ա՛յլ բան չի ստանում, եթէ ոչ միայն՝ ցաւեր. գիտութեան ինչպիսի՛ գանձերի է տիրում հոգին. ինչպէ՛ս նոր գիտելիքների ձեռքբերումը չի մթազնում հներին, այլ պահպանում է դրանց ճշգրիտ ու անխառն յիշատակը, հոգու խորքում քանդակուած՝ ինչպէս պղնձէ սիւնի վրայ. ինչպէ՛ս հոգին, երբ հրապուրուելով հետեւում է մարմնի կրքերին, կորցնում է իր գեղեցկութիւնը². ինչպէ՛ս, չարիքի ամօթից մաքրուելով, առաքինութեան շնորհիւ վերադառնում է Արարչի հետ նմանութեանը³:

8. Հոգու հայեցողութիւնից յետոյ, եթէ կամենում ես, քննիր նաեւ մարմնի կառուցուածքը եւ գմայլուելով տես, թէ գերագոյն ճարտարապետն ինչպիսի՛ արժանավայել բնակատեղի է պատրաստել բանական հոգու համար:

Բոլոր կենդանի էակների մէջ միմիայն մարդուն է տուել ուղղահայեաց դիրք, որպէսզի ձեւիցդ անգամ ըմբռնես, որ կեանքդ ընտանութիւն ունի վերին իրողութիւնների հետ: Բոլոր չորքոտանիները կքուած են որովայնի վրայ, մինչ մարդու հայեացքն ուղղուած է դէպի երկինք, որպէսզի չնուիրուի որովայնի ու նրա կրքերի ծառայութեանը, այլ իր բոլոր փափաքները դէպի վեր ուղղի:

Ապա գլուխը. Աստուած այն տեղադրել է ամենավերելում եւ այնտեղ է հաստատել ամենակարեւոր զգայարանները: Այնտեղ են տեսողութիւնը, լսողութիւնը, ճաշակելիքը, հոտառութիւնը, մէկը միւսի կողքին: Եւ այսպիսով, չնայած գտնուում են այսքան նեղ տարածքում, ոչ մէկը չի խանգարում գործունէութեանը նրա՝ որն իր կողքին է:

¹ Հմմտ. Կղս 1, 15

² Հարկաւոր է միշտ յիշել, որ կրքերը, հոգու բնական կարողութիւնները լինելով, ինքնըստինքեան չար չեն: Այդպիսին են դառնում, երբ գործածուում են բնական օրէնքին եւ Աստծոյ կողմից հաստատուած բարոյական օրէնքին հակառակ: Այս էջերում, հետեւաբար, ուր Բարսեղը խօսում է մարմնի հաճոյքների, ցանկութիւնների ու կրքերի մասին, չպէտք է հասկանալ թէ մարմնին վերաբերուող ամէն բան չար է եւ քրիստոնեայի համար խոստատիւն, այլ Հայրապետը պարզապէս կամենում է զգուշացնել մեզ չափազանցուածութիւններից, որոնք մթազնում են բանականութիւնը եւ ստրկացնում են հոգին:

³ Աստծոյ պատկերով ու նմանութեամբ մարդու արարման գաղափարը տիրում է արեւելեան ու արեւմտեան Հայրերի մարդաբանական եւ հոգեւոր տեսութիւններում: «Պատկեր» (eikon) եւ «նմանութիւն» (homoiosis) երկու եզրերը գանազան կերպով են հասկացուում Հայրախօսական աւանդութիւնում: Բարսեղը, Որոգինէսին հետեւելով, պատկերը նկատում է որպէս մի պարզեւ, որը մարդը ստացել է արարչութեան պահին, որպէս աստուածացման սկիզբ կամ բողբոջ, իսկ նմանութիւնը՝ որպէս շնորհի կեանքում հոգեւոր յառաջադիմութեան պտուղը:

Աչքերը գրաւում են տեսանելիութեան ամենաբարձր կէտը, այնպէս՝ որ մարմնի մասերից ոչ մէկը չի ծածկում իրենց, այլ թարթիչներից պաշտպանուելով՝ ուղիղ գծով հաստատուն պահպանուում են իրենց վրայի ցցուածքով:

Ականջը, մինչդեռ, չի ներկայանում ուղղակի բացուածքով, այլ օդում ներկայ հնչիւններն ընդունում է խորդուբորդ խողովի միջոցով: Սա նոյնպէս յայտարար նշան է բարձրագոյն իմաստութեան, որովհետեւ ձայնը, մինչ առանց արգելքների թափանցում է ներս, է՛լ աւելի հնչեղ է դառնում գալարումներում, որոնցով անցնում է, եւ ո՛չ մի արտաքին պատճառ չի կարող արգելել լսողութիւնը:

Քննիր լեզուի կառուցուածքը. քանի՛ցս նուրբ է, ճկուն եւ իր շարժումների զանազանութեամբ ունակ տարբեր լեզուներով խօսելու: Ատամները մի կողմից ձայնի գործարաններ են, հաստատունութիւն պարգեւելով լեզուին, միւս կողմից էլ ծառայում են սննդառութեանը, ոմանք՝ պատառելու, ոմանք էլ՝ ծամելու համար:

Եւ այսպէս, շարունակելով պատշաճ կերպով քննել մարմնիդ բոլոր մասերը եւ խորհրդածելով թոքերի մէջ օդի ներշնչման, սրտի ներսում ջերմութեան պահպանման, մարսողական գործարանների եւ երակների մասին, որոնցում հոսում է արիւնը, այդ ամէնից կը ճանաչես անքննելի իմաստութիւնը¹ Նրա՝ ով ստեղծել է քեզ, այն աստիճան, որ դու նոյնպէս կը բացականչես Մարգարէի հետ. «Իմ համար սքանչելի է Քեզ ճանաչելը»²: Հսկիր քո վրայ, ուրեմն, հսկել կարողանալու համար Աստծոյ ճանաչողութեան մէջ³, որին վայել է փառք եւ զօրութիւն յաւիտեանս: Ամէն:



¹ Հմմտ. Հռմ 11, 33

² Սղմ 138, 6

³ Սեփական անձի ճանաչողութեանը կապուած է Աստծոյ ճանաչողութիւնը: Վեցամատեանի մասին իններորդ քարոզում Բարսեղը գրում է. «Եւ սակայն մեզ տրուած է ճանաչել Աստծուն երկնքի ու երկրի միջոցով այնքան՝ որքան թոյլատրուած է մեզ ճանաչել Նրան մեր իսկ բնութեան ճանաչողութեան միջոցով, գէթ նրանց ուղբեր իրենց անձերը քննում են իմաստութեամբ, ինչպէս ասում է Մարգարէն. "Սքանչելի է Քո ճանաչումը, որն ինձնից քաղեցի" (Հմմտ. Սղմ 138, 6), այսինքն՝ ինքս ինձ ճանաչելով հասկացայ անսահման իմաստութիւնդ»: